Ինքնակենսագրություն

Ես՝ Տաթևիկ Հովհաննեսի Սուջյանս, ծնվել եմ 1989 թվականի հուլիսի 6-ին Շիրակի մարզի Արթիկ քաղաքում: 1996-2006թթ. սովորել եմ Արթիկ քաղաքի թիվ 7 միջնակարգ դպրոցում: 2006 թվականին ընդունվել, ապա 2010 թվականին ավարտել եմ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը: 2010-2012թթ. սովորել եմ նույն բուհի մագիստրատուրայում՝ քրեական իրավունք և դատավարություն մասնագիտությամբ: 2012 թվականին ընդունվել եմ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրա՝ «Դատական իրավունք» մասնագիտությամբ: 2016 թվականին ավարտել եմ ասպիրանտուրան՝ պաշտպանելով «Վճռաբեկությունը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև ՀՀ քրեական դատավարությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը: ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի՝ իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի որոշմամբ ինձ շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: ԵՊՀ գիտական խորհրդի՝ 2019 թվականի մայիսի 23-ի որոշմամբ ինձ շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

2019-2021թթ. եղել եմ ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի՝ իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարը:

2012 թվականի մարտի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 23-ը աշխատել եմ ՀՀ արդարադատության նախարարության՝ «Իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում որպես կրտսեր փորձագետ: 2014 թվականի մարտի 24-ից մինչև 2016 սեպտեմբերի 2-ը աշխատել եմ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի օգնական պաշտոնում: 2015 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր դասավանդում եմ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում:

2016 սեպտեմբերից մինչև 2017 թվականի մայիս ամիսը աշխատել եմ ՀՀ արդարադատության նախարարությունում որպես ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական: 2017 թվականի մայիսի 22-ից մինչև 2018 թվականի

սեպտեմբերի 28-ը աշխատել եմ ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալի աշխատակազմում՝ որպես խորհրդական:

2018 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2019 թվականի փետրվարի 1-ը զբաղեցրել եմ ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության մասնագետի պաշտոնը: 2019 թվականի փետրվարի 1-ից առ այսօր աշխատում եմ ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնատակատար:

Որպես ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն դոցենտ, ի.գ.թ.՝ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի և ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի անդամ եմ (համաձայնությամբ):

Ամուսնացած չեմ:

15.09.2022 S.Սուջյան